ղանի փոխարէն: Տախտակի վրայ դրած էին զանազան նկարներ, որոնք պատկերացնում էին, որքան ես կարողացայ հասկանալ, նաւի այս եւ այն մասների առանձին-առանձին գծագրութիւնները: Ասլանը ծերունի արհեստաւորին ցոյց էր տալիս այդ նկարները, բացատրում էր նրանց համեմատական չափը, տարածութիւնը, կազմուածքը եւ ալն: Արհեստաւորը ուշադրությամբ լսում էր նրան: Մի կողմում նստած էր վարպետ Փանոսը, միւս կողմում՝ Բերզէն-Օղլին: Նրանք եւս երբեմն յայտնում էին իրանց կարծիքները:

Երբ Ծովիկը ներս մտաւ, բոլորը, գիշերային այն տարաժամ պահուն տեսնելով նրան, զարմացած մնացին: Նա մօտեցաւ հօրը, ինչ-որ փսփսաց նրա ականջին: Հայրը անմիջապէս դուրս եկաւ արհեստանոցից:

Երէում էր, որ Ասլանը վերջացրել էր իր գործը. եւ նա նոյնպէս երկար չմնաց այնտեղ, նկարները յանձնեց հիւսնին եւ դուրս եկաւ: Մինչեւ սրահը հասնելը՝ նա հարցրեց վարպետ Փանոսից.

— Դուք կարծում էք, որ նա կարո՞ղ կը լինի պատրաստել...

— Սատանայի համար սօլ կը կարէ թշոառականը, — պատասխանեց վարպետ Փանոսը ծիծաղելով, — ես համոզուած եմ, որ կարող կը լինի պատրաստել: Տասն տարուց աւելի, որպէս աքսորեալ, Անգլիայի թիարաններում աշխատել է: Վերին աստիճանի շնորհալի մարդ է, բացի իրանից, նա հասցրել է եւ մի քանի լաւ աշակերտներ...

Ժ. ՓՈԹՈՐԻԿ

Ջերմ, տօթային գիշերը անցաւ անհանգիստ կերպով. ինձ վիճակուած էր լռել դժբախտ կնոջ աղէտաւոր պատմութիւնը: Ասլանը զբաղուած էր հիւսնի արհեստանոցում, նաւաստին եւ վարպետ Փանոսը նոյնպէս անքուն մնացին: Չնայելով այդ բոլորին, առաւօտեան ստիպուած էինք խիստ վաղ վերկենալ, որովհետեւ Ասլանը դիտաւորութիւն ունէր նաւակով Կտուց անապատը գնալ:

Աղօթարանը դեռ նոր էր սկսել պարզուիլ, դեռ առաջին անգամ լսելի եղաւ գիւղական ժամատան կոչնակի անհամբեր հրաւէրը, երբ նաւաստիի որոտալից ձայնը զարթեցրեց ինձ: Նրա ձայնը զարթեցրեց եւ Ասլանին: Վարպետ Փանոսը դեռ խռմփում էր:

Նաւաստիի կոպտութիւնը բաւական վրդովեցրեց ինձ, տրտնջալով հագնուեցայ եւ գիւղական սովորութեամբ դուրս եկայ փողոցը, այնտեղ բակի դռան առջեւից հոսող առուակի մէջ երեսս լուանալու: Բայց իմ տրտունջը հս-